# Մաքրության Աղոթք

Տերունական Աղոթք- Ներքին խաղաղության բանալին
Մաս 5

*«Այսպես աղոթեք...և ներիր մեզ մեր պարտքերը...»*
Մատթեոս 6:12

Աստված ի՞նչպես է ներում?

## 1. Աստված անմիջապես է ներում ինձ

*«Թող ամբարիշտը թողնի իր ճանապարհը, իսկ անօրեն մարդը՝ իր խորհուրդները ու վերադառնա Տիրոջը, և նա կգթա նրան և առատապես կների:»* Եսայիա 55:7

*«Եթե մեր մեղքերը խոստովանենք, նա հավատարիմ է ու արդար՝ մեր մեղքերը ներելու մեզ և մաքրելու մեզ ամեն անիրավությունից:»* Ա Հովհաննես 1:9

## 2. Աստված միշտ է ներում ինձ

*«Դու ներող, ողորմած, գթառատ, համբերատար և բազումողորմ Աստված ես:»* Նէեմիա 9:17

*«(Քրիստոս) միշտ կենդանի է, որպեսզի նրանց համար բարեխոս լինի:»* Եբրայեցիս 7:25

## 3. Աստված ձրիաբար է ներում ինձ

*«Բոլորը մեղանչեցին… Նրա շնորհով ձրի են արդարացվում այն փրկության միջոցով, որ Հիսուս Քրիստոսով է:»* Հռովմայեցիս 3:23-24

*«Շնորհով եք փրկվել հավատի միջոցով, և սա ձեզանից չէ, այլ Աստծու պարգևն է: Ոչ էլ գործերից է, որպեսզի ոչ ոք չպարծենա:»* Եփեսացիս 2:8-9

## 4. Աստված կատարելաբար է ներում ինձ

*«Աստված իր հետ կենդանացրեց՝ մեր բոլոր հանցանքները ներելով: Եվ ջնջեց մեր դեմ դատավճռի ձեռագիրը և այն մեջտեղից վերացրեց ու խաչափայտին գամեց:»* Կողոսացիս 2:13-14

*«Որի միջոցով ունենք փրկություն՝ մեղքերի թողություն:»* Կողոսացիս 1:14

*«Աստված նրան նախապես սահմանեց քավություն լինելու իր արյամբ, իր հավատով.»* Հռովմայեցիս 3:25

*«Դա է նոր ուխտի իմ արյունը, որ թափվում է շատերի մեղքերի թողության համար:»* Մատթեոս 26:28

*«Ես պիտի ներեմ նրանց անօրինությունը և նրանց մեղքերն այլևս չեմ հիշի:»* Երեմիա 31:34

*«Ոչ մի դատապարտություն չկա Հիսուս Քրիստոսի մեջ եղողների համար:»* Հռովմայեցիս 8:1

Հաջորդ Կիրակի

**Արձակման Աղոթք**

Տերունական Աղոթք- Ներքին խաղաղության բանալին

Հովիվ Սարօ Խաչիկեան